

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆ

XXI դարի սկզբում լեզվաբանական գիտության առջև ծառայած մարտահրավերներից է, մեր կարծիքով, առարկայի, օբյեկտի և նպատակի հստակեցման խնդիրը տվյալ մասնագիտական ոլորտում: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում լեզվի մասին գիտությունը ծառայել է տարբեր նպատակների. հնում՝ գրական տեքստերի պաշտպանմանը բարբառների ազդեցությունից, միջնադարում՝ Սուրբ Գրքի տեքստերի աստվածաբանական և փիլիսոփայական մեկնաբանությանը, արդի ժամանակներում՝ լեզվի օրինաչափությունների և լեզվի փոփոխության պատճառների որոնումներին: Ժամանակակից գիտնականների ուսումնասիրությունների շրջանակում ներկայումս հայտնվել է ոչ թե Սոսյուրի «լեզուն ինքնին և իր համար», այլ հենց ինքը մարդն ու աշխարհը՝ լեզվի դիտակետից: Լեզվաբանության առաջնահերթությունների մեծ փոփոխման գործընթացում իր ազդեցությունը ունեցավ հիմնականում լեզվի վերլուծական փիլիսոփայությունը (аналитическая философия языка) և մոտավորապես նույն ժամանակահատվածում ի հայտ եկած Սեպիր-Ուորֆի լեզվական հարաբերականության վարկածը: Այս տեսական ֆոնը մեծապես նպաստեց գիտության մեջ լեզվի՝ որպես ճանաչողական գործիքի հումբոլդտյան տեսության վերադարձին և բավական ընդլայնեց լեզվաբանական հետազոտության շրջանակները՝ արմատապես փոխելով արտալեզվական պատկերացումները:

Ինչպես նշում է Վ. Ի. Կարասիկը, Ի. Բոդուենը դը Կուրտենեն կանխատեսում էր, որ լեզվական ընդհանրացումը կընդգրկի առավել լայն շրջանակներ և էլ ավելի կմիավորի լեզվաբանությունը այլ գիտությունների, մասնավորապես՝ հոգեբանության, մարդաբանության, հասարակագիտության հետ<sup>1</sup>: Լեզվաբանական հետաքրքրությունների շրջանակների այս աննախադեպ ընդլայնումը պահանջեց լեզվի կառուցվածքային համակարգի ուսումնասիրության նոր կողմեր, որոնք նկարագրում են լեզվի և արտալեզվական գործոնների փոխգործակցության դրսևորումները:

Լեզուն կոնկրետ ժամանակատարածական իրադրության մեջ մասնավորապես նկարագրվում է «խոսույթ» տերմինով: Շրջանառության մեջ դրվելով Ֆրանսիայում 1960-ականների հետստրուկտուրալիզմի ժամա-

<sup>1</sup> Տե՛ս Կարասիկ В. И. Язык социального статуса. М., 1992, էջ 3:

նակ, այն արագորեն փոխարինեց բազմաթիվ այլ տերմինների՝ առաջին հերթին ցույց տալով ժանրերի միջև եղած սահմանների անհետացումը: Ժ. Դերիդան, օրինակ, իր վաղ աշխատանքներից մեկում խոսույթը կոչում է «տեքստի իրական գիտակից պատկերացում գրողների և կարդացողների փորձով»<sup>2</sup>: Ն. Ս. Ավտոնոմովան նշում է, որ «ներկայումս այդ բառը (խոսույթ) կարող է նշանակել գրեթե ամեն ինչ, տերմինաբանական պարզությամբ դրսևորվելով թերևս միայն analyse du discours-ի հանրալեզվաբանական ուղղվածության մեջ, որը միտված է բացահայտելու որոշակի սոցիալական օրինաչափություններ տեքստերի գործողություններում»<sup>3</sup>: Հիմնվելով մի կողմից վերլուծական փիլիսոփայության մեջ արժևորված լեզվի գաղափարի (Լ. Վիտգենշթայն), իսկ մյուս կողմից ֆենոմենոլոգիայի (Մ. Հայդեգեր) վրա, ժամանակակից գիտնականներն ընդգծում են լեզվի դերը և դրա գործունեության պայմանները հասարակության զարգացման, անգամ աշխարհի ամբողջական պատկերի ստեղծման հարցում:

Այս ուսումնասիրության մեջ մենք առանձնացնում ենք «խոսույթ» տերմինի սոցիալ-գործաբանական հասկացությունը՝ որպես արտալեզվական գործոնների հետ «համաձայնեցված տեքստ», «կյանք ներմուծված խոսք»<sup>4</sup>:

Հստակեցնելով տվյալ հետազոտության ուղղությունը՝ փորձել ենք հանգամանակից ուսումնասիրության ենթարկել խոսույթի հիմնական բաղադրիչների առանձնահատկությունները, որոնք են՝ «մասնակիցներ, պայմաններ, սոցիալական կարգավիճակ, հաղորդակցման միջավայր, հաղորդակցման նպատակներ, դրդապատճառներ, հաղորդակցման ժանր և ոճ և այլն»<sup>5</sup>:

Ուսումնասիրության նպատակներից կախված՝ կարող են առանձնացվել ֆենինիստական խոսույթ, ազատական խոսույթ, ազգայնական խոսույթ, վերահսկող խոսույթ և խոսույթի անսահմանափակ քանակի այլ տեսակներ՝ տարբերակված ըստ որոշակի չափանիշների: «Կյանք ներմուծված խոսքի» ուսումնասիրությունը պահանջում է հաշվի առնել տարբեր մոտեցումներ սոցիալական ինստիտուտներում, ինչպիսիք են, օրինակ, քաղաքական գործունեությունը, կրթական համակարգը, բանակը, դատական համակարգը: Լեզվի ուսումնասիրությունը՝ որպես սոցիալական երևույթ անհնար է առանց հաշվի առնելու ինստիտուցիոնալ կոնկրետ կարգավիճակային և դերային հարաբերությունները, քանի որ նրանք են անհատին դարձնում սոցիալական էակ:

Յուրաքանչյուր հաստատություն ունի սեփական լեզուն, և այս հարցում մենք համամիտ ենք Ե. Շեյգալի հետ, որը գտնում է, որ «յուրա-

<sup>2</sup> Деррида Ж. О грамматологии. М., 2000, с. 92.

<sup>3</sup> Автономова Н. Деррида и грамматология // Деррида Ж. О грамматологии. М., 2000, с. 92.

<sup>4</sup> Арутюнова Н. Д. Дискурс // Лингвистический энциклопедический словарь. М., 1990, с. 136.

<sup>5</sup> Карасик В. И. О категориях дискурса // Языковая личность: социолингвистические и мотивные аспекты. Волгоград, 1998, с. 185.

քանչյուր ինստիտուցիոնալ խոսույթ օգտագործում է սահմանված մասնագիտական ուղղվածության նշանների համակարգ կամ, այլ կերպ ասած, ունի իր սեփական ենթալեզուն»<sup>6</sup> (հատուկ բառապաշար, դարձվածաբանություն և այլն - է. Ա.):

Բաղկացուցիչ հատկանիշների բազմազանության պայմաններում խոսույթի տեսակը որոշելու հարցում կարևոր դեր է խաղում խոսույթի նպատակը: Քաղաքական խոսույթում, օրինակ, բոլոր նախատիպերի հետևողական ձևավորումը ենթակա է նույն նպատակին, կանխամտածված հիմքին՝ պայքար իշխանության համար, կրոնականում՝ հաղորդություն հավատքին: Ընդհանուր իմաստով ինստիտուցիոնալ խոսույթի նպատակը, ինչպես նշում է Վ. Կարասիկը, ուղղված է հասարակական ինստիտուտների պահպանմանը, հասարակական կառուցվածքի կայունությանը, նման կապի պայմաններում ամրագրում է համատեքստը ժամանակային առումով<sup>7</sup>:

Հեղինակը հավելում է, որ ինստիտուցիոնալ շփումը դիմակներով հաղորդակցման մի տեսակ է: Մյուս կողմից՝ ինստիտուցիոնալ խոսույթը իր մաքուր ձևով համեմատաբար հազվադեպ է հանդիպում:

XXI դարի սկզբին լեզվաբանությունը խոսույթի հանրալեզվաբանական վերլուծության ոլորտում փորձում է որոշել, թե ինչու և ինչպես է իրականացվում հաղորդակցումը տարբեր գործոնների (լեզվական և արտալեզվական) ազդեցության ներքո՝ այդ թվում ընդգծելով նաև ինստիտուցիոնալ հաղորդակցման հատկանիշների կարևորությունը:

Թ. վան Դեյկը կարևորում է խորքային կապը լեզվի և գաղափարախոսության միջև և քննադատական դիսկուրսի վերլուծության հիմնական խնդիրը տեսնում է նման կառույցների համոզմունքների բացահայտման մեջ: Այդ վերլուծությունը պարզում է դրանց ազդեցությունը խմբի այլ անդամների գիտելիքների վրա, պատասխանում է այն հարցին, թե «ինչպես են այդ համոզմունքները վերահսկում սոցիալական գործունեությունը առհասարակ և մարդկանց բանավոր համագործակցումը, մասնավորապես, խոսույթում և խոսքում»<sup>8</sup>: Լեզվաբանական ուսումնասիրության անմիջական առարկա են հաղորդակցական տարբեր պայմաններում առկա տարբեր խոսքային ժանրերի տեքստերը, որոնք մաս են կազմում հաղորդակցական տարբեր իրադարձությունների:

Ըստ Մ. Բախտինի՝ հաղորդակցումը տեղի է ունենում «միայն որոշակի խոսքային ժանրերում»<sup>9</sup>, այսինքն՝ մեր բոլոր հաղորդագրությունները ունեն հստակ և համեմատաբար կայուն ձև՝ մեկ ամբողջի ձևավորման մեջ:

<sup>6</sup> Шейгал Е. И. Семиотика политического дискурса. Волгоград, 2000, с. 13.

<sup>7</sup> St'u Карасик В. И. Религиозный дискурс // «Языковая личность: проблемы лингвокультурологии и функциональной семантики». Волгоград, 1999, էջ 5:

<sup>8</sup> Ван Дейк Т. А. Язык и идеология: к вопросу о построении теории взаимодействия // Методология исследований политического дискурса: актуальные проблемы содержательного анализа общественно-политических текстов. Вып. 2. БГУ, 2000, с. 54.

<sup>9</sup> Бахтин М. М. Эстетика словесного творчества. М., 1979, с. 257.

Խոսքային ժանրի կարևոր յուրահատկություններից է ֆունկցիոնալ կապը մարդկային գործունեության տարբեր տեսակներին: Հետազոտողները նշում են նաև խոսքային ժանրի ծայրահեղ բազմազանությունը: Այն ընդգրկում է և՛ կենցաղային խոսքը, և՛ անեկդոտը, և՛ ելույթը, և՛ հաշվետվությունը, և՛ հողվածք թերթում, ինչպես նաև գրական ժանրերը: Խոսույթի հանրալեզվաբանական վերլուծության համար կարևոր է Տ. Տարասենկոյի գաղափարն այն մասին, որ խոսքային ժանրերը այն «սցենարն» են, որը ձևավորում է զրուցակիցների՝ հասցեագրող և հասցեատեր, սոցիալական դերը<sup>10</sup>:

Ըստ Մ. Մակարովի՝ տեքստը սովորաբար բաղկացած է մի քանի համեմատաբար ինքնուրույն դրվագներից, որոնք կարող են մեկնաբանվել որպես անկախ ժանրեր<sup>11</sup>: Սակայն, մեր կարծիքով, այս հայտարարության ճշմարտացիությունը կախված է տեքստի տեսակից: Գրական տեքստերը իսկապես կարող են բնութագրվել հենց այդպես, սակայն խոսույթի տեքստերի կառուցվածքում, որպես կանոն, նկատվում է ժանրային բավականին խիստ միօրինակություն: Դժվար թե դատարանի մեղադրական տեքստում կամ հիվանդանոցային քարտերի գրառումներում մենք գտնենք իրարից անկախ ժանրային նմուշներ:

Մենք կարծում ենք, որ տարբեր ժանրերի տեքստերը միշտ չէ, որ խոսույթի հետ գտնվում են ներառական հարաբերության մեջ, ավելի շուտ նախատիպային ժանրերի հետ կազմում են կառուցվածքային դաշտ, որը կարող է գտնվել առավել կամ պակաս հեռու այս խոսույթի տեսակի երևակայական կենտրոնից: Այսպես՝ քաղաքական խոսույթի համար նախատիպային ժանր կլինի քաղաքական գործչի հրապարակային ելույթը, իսկ քաղաքական որևէ կուսակցության ընտրարշավի հեռուստատեսային գովազդի ժանրը կհամարվի երկրորդական: Խոսքի ժանրերը ինքնուրույն չեն գոյանում, նրանց միջև առկա են որոշակի համակարգային հարաբերություններ: Այս համատեքստում առաջանում են ժանրային ամբողջական խմբեր: Տարբեր ժանրերի տեքստերի նման ամբողջականացումն էլ ինստիտուցիոնալ խոսույթների շրջանակում ձևավորում է խոսույթային դաշտ, որը և շատ լեզվաբաններ անվանել են հիպերժանր: Ընդ որում՝ հիպերժանր ասելով կարելի է հասկանալ խոսքային այն ձևերը, որոնք ներառում են սոցիալ-հաղորդակցական իրավիճակներ՝ միավորելով տարբեր ժանրեր:

Տարբերակման է ենթակա, օրինակ, ընտանեկան հիպերժանրը, որը ներառում է այնպիսի ժանրեր, ինչպիսիք են ընտանեկան զրույցները, վիճարանությունները և այլն<sup>12</sup>:

<sup>10</sup> Տե՛ս **Тарасенко Т. В.** Речевой жанр как социальный знак. <http://arctogaia.krasu.ru/mentality/m3/tarasenko.shtm>

<sup>11</sup> Տե՛ս **Макаров М. Л.** Интерпретативный анализ дискурса в малой группе. Тверь, 1998, էջ 200:

<sup>12</sup> Տե՛ս **Дементьев В. В., Седов К. Ф.** Социопрагматический аспект теории речевых жанров. Саратов, 1998, էջ 19:

Մենք համամիտ ենք Ի. Կուպերի հետ, որը անդրադարձել է տեքստը իր ամբողջության մեջ ուսումնասիրելու անհրաժեշտությանը. «Հաղորդակցական տարբեր համակարգեր (քաղաքականություն, ամենօրյա կապ, գիտություն, կրոն, արվեստ) արտադրում և հեռարձակում են իրենց տեքստերը հաղորդակցական տարբեր ուղիներով, որոնք խաչվելով և վերամեկնաբանվելով, առաջացնում են նոր տեքստեր: Տեքստերը միահյուսվում են, ընդլայնվում: Մեկ առաձին տեքստը հասկանալ անհնար է առանց այլ տեքստերի ներգրավման»<sup>13</sup>:

Ընդհանրապես, խոսույթային ձևավորումների ցանկացած վերլուծություն հնարավոր չէ իրականացնել առանց նշանագիտության, որի կարևորագույն բաղադրիչներից է գործաբանությունը: Յուրաքանչյուր խոսույթային ձևավորում դիտարկվում է իմաստաբանություն-շարահյուսություն-գործաբանություն համամասնության մեջ:

Տեքստը պետք է համապատասխանի երեք պայմանի:

1. Տեքստ կհամարվի այն հաղորդագրությունը, որ տարածականորեն ամրագրված է:

2. Տեքստի տարածական ամրագրումը պատահական երևույթ չէ, այլ անհրաժեշտ միջոց հեղինակի կամ մյուսների կողմից այդ հաղորդագրության կանխամտածված փոխանցման համար:

3. Ենթադրվում է, որ տեքստը պարզ է, այսինքն՝ կարիք չկա ապակողավորման, այն չի պարունակում իր ըմբռնումը կասեցնող լեզվական դժվարություններ<sup>14</sup>:

Լեզվաբաններ Ն. Կուպինան և Գ. Բիտենսկայան, ուսումնասիրելով տեքստը որպես մշակութային միավոր և ընդգծելով տեքստի երկակի բնույթը (տեքստը իր ներսում պարունակում է մշակութային տեղեկատվություն և առկա է մշակութուն որպես ինքնուրույն միավոր), հանգել են այն մտքին, որ հարկավոր է առանձնացնել հատուկ մշակութային համակարգի խոսքային կառուցվածք, իրենց բնորոշմամբ՝ «գերտեքստ»<sup>15</sup>:

Տվյալ հասկացությունը հնարավորություն է տալիս քննարկելու քիչ թե շատ փոխկապակցված մի շարք տեքստեր՝ որպես մի ամբողջություն, այսինքն՝ ուսումնասիրելու միջտեքստային կապերը ամբողջության մեջ: Մեր կարծիքով, ցանկացած գերտեքստ պետք է դիտել որպես տեքստի տարատեսակ՝ բավական վառ արտահայտված առանձնահատկություններով, որոնցից առավել կարևոր են կապակցվածությունը և ամբողջականությունը, որոնք Տ. Նիկոլաևան բնորոշում է որպես տեքստի հիմնական հատկություններ<sup>16</sup>:

<sup>13</sup> Купер И. Р. Гипертекст как способ коммуникации. <http://www.nir.ru/Socio/scipubl/sj/sj1-2-00kuper.html>

<sup>14</sup> Տե՛ս **Мамардашвили М. К., Пятигорский А. М.** Символ и сознание: Метафизические рассуждения о сознании, символическом и языке. М., 1999, էջ 116:

<sup>15</sup> **Купина Н. А., Битенская Г. В.** Сверхтекст и его разновидности // Человек–Текст–Культура. Екатеринбург, 1994, с. 215:

<sup>16</sup> Տե՛ս **Николаева Т. М.** Лингвистическая демагогия // «Прагматика и проблемы интенциональности». М., 1988, էջ 507:

«Գերտեքստ» տերմինը շատ ավելի լայն է, քան վան Դեյկի կողմից առաջարկված «մակրոխոսքային ակտ» տերմինը. այն կարող է պարունակել անսահմանափակ թվով հաղորդակցվողներ, դրանց խոսողական-կատարողական նպատակները կարող են տարբեր լինել:

Հետաքրքրական է «գերտեքստ» տերմինի հարաբերակցությունը վերջին տասնամյակում լայն տարածում գտած «հիպերտեքստ» տերմինի հետ, որը շրջանառել է Տ. Նելսոնը: Հիպերտեքստ ասելով մենք նկատի ունենք ոչ հաջորդական գրառումը, քանի որ մտածողությունը ձևավորում է նաև ոչ հաջորդական կառույցներ: Հիպերտեքստի առաջացումը հատկապես օրինաչափ է տեղեկատվական արդի ժամանակահատվածում՝ որպես հասարակության հաղորդակցման միջոցի:

Մենք համամիտ ենք Թ. վան Դեյկի այն մտքին, որ «խոսույթը, բառի ամենալայն իմաստով բարդ լեզվական ձևի, իմաստի և գործողության միասնություն է, որը լավագույնս կարող է բնութագրվել հաղորդակցական իրադարձություն հասկացության օգնությամբ»<sup>17</sup>: Իր ձևով խոսույթը ոչ միայն իրար հետ կապակցված նախադասությունների հաջորդականություն է, այլև իրենից ներկայացնում է իմաստային միասնություն, որտեղ առկա է իմաստային և տեղեկատվական կապակցվածություն: Օրինակ՝ ցանկացած ժանրի խոսույթ հասկանալու համար պահանջվում է իրավիճակի գիտակցում, սոցիալական իրազեկվածություն և որոշակի մշակութային ու այլ տեսակի գիտելիքներ<sup>18</sup>: Հասկանալի է, որ խոսքային բարդ երևույթները կարող են տեղ գտնել խոսքային ժանրերի տարբեր տեսակներում, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, «խոսքային բարդ երևույթ» տերմինը ավելի լայն իմաստ ունի: Հենց խոսույթային ձևավորումները, որպես խոսքային բարդ երևույթ, մեր կարծիքով, կարող են օգնել տեքստերը վերլուծել ստեղծման և վերաստեղծման, այլ կերպ ասած՝ արտադրման և վերարտադրման դինամիկ բնույթին համընթաց:

Վերջին տարիներին լեզվաբանների ուշադրությունը հատկապես կենտրոնացած է տեքստ/խոսույթ հակադրության ուսումնասիրության վրա, որը հումանիտար գիտություններում հանգեցրել է խոսույթային հեղափոխության:

Քաղաքական իրականության հետ կապված և քաղաքական որոշակի իրադարձությանը առնչվող տարբեր սյուժեներ (ընտրություններ, այցեր, հրաժարականներ, սկանդալներ) հիմք են հանդիսանում քաղաքական պատումի և խոսույթային տարբեր ժանրերի ձևավորման համար<sup>19</sup>:

<sup>17</sup> Ван Дейк Т. А. Язык. Познание. Коммуникация. М., 1989, с. 122:

<sup>18</sup> Տե՛ս Կубрякова Е. С. О понятиях дискурса и дискурсивного анализа в современной лингвистике // «Дискурс, речь, речевая деятельность: функциональные и структурные аспекты: Сб. обзоров». М., 2000, էջ 8:

<sup>19</sup> Տե՛ս Шейгал Е. И. Политический скандал как нарратив // «Языковая личность: социолингвистические и эмотивные аспекты: Сб. науч. трудов». Волгоград, 1998, էջ 55:

Քաղաքական խոսույթ տերմինը ինքնին արդեն վաղուց լայնորեն օգտագործվում է բազմաթիվ ուսումնասիրություններում: Ինչպես նշում է Շեյգալը՝ Վ. Ջելինսկին տարբերակում էր քաղաքական խոսույթի երկու մակարդակ: Պաշտոնական քաղաքականության առաջին մակարդակն ընդգրկում է լրատվամիջոցները, կրթական համակարգը և բոլոր այն հասարակական ինստիտուտները, որոնք վերահսկում են հասարակական կյանքի երևույթները: Քաղաքական երկրորդ մակարդակը անհատականն է, այն մի ճանապարհ է, որտեղ առաջին մակարդակը առկայանում է անհատի գիտակցության մեջ և դրսևորվում անհատի կողմից ընտանիքում, մարդկային հարաբերություններում, մասնագիտական գործունեության մեջ, ինչպես նաև՝ գրականության և արվեստի գործերում<sup>20</sup>:

Շեյգալի առաջ քաշած այս մոտեցման համաձայն՝ մենք քաղաքական խոսույթը դիտում ենք որպես ցանկացած խոսքային դրսևորում, որի սուբյեկտը, հասցեատերը կամ բովանդակությունը վերաբերում է քաղաքական ոլորտին<sup>21</sup>: Չնայած քաղաքական խոսույթի մասին շատ է գրվել, բայց և այնպես հարկ ենք համարում նշել, մեր կարծիքով, հիմնական բնութագրերը:

1. Ինստիտուցիոնալությունը, ներկայացուցչականությունը, կարգավիճակային սոցիալական հաղորդակցումը հասարակական ինստիտուտներում՝ ի տարբերություն այլ ինստիտուցիոնալ խոսույթների:

2. Իմաստային անորոշությունը թե՛ իմաստաբանական, թե՛ գործաբանական մակարդակում, ինչպես նաև մանիպուլյացիոն բնույթը:

3. Իռացիոնալությունը՝ ազդեցություն զգացմունքների և ենթագիտակցության վրա:

4. ՁԼՄ-ներով միջնորդվածությունը (քանի որ լրագրողները հաճախ քաղաքական գործիչների համահեղինակներ են), թատերականացվածությունը, քաղաքական գործընթացը՝ որպես խաղարկային գործողություն<sup>22</sup>:

Այս հատկանիշներից յուրաքանչյուրը կարևոր է քաղաքական խոսույթի դրսևորման այնպիսի ձևերի համար, ինչպիսիք են նախընտրական քարոզարշավը, քաղաքացիական անհնազանդության ակցիան, քաղաքական բանավեճը և այլն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ խոսույթը, մասնավորապես քաղաքական խոսույթը, գտնվում է լեզվահասարակագիտական հարացույցի ուսումնասիրությունների խաչմերուկում՝ ընդգրկելով և միավորելով լեզվաբանությունը այլ գիտությունների՝ մասնավորապես հոգեբանության, մարդաբանության, հասարակագիտության հետ:

<sup>20</sup> Տե՛ս Шейгал Е. И. Семиотика политического дискурса. Волгоград, 2000, էջ 23:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 43-73:

**ЭДУАРД АВАГЯН – *Социолингвистическое исследование дискурса.*** – В статье дискурс исследуется в свете социопрагматики, с точки зрения совокупности лингвистических и экстралингвистических факторов. Взаимосвязь терминов «дискурс», «жанр» и «текст» анализируется в политическом аспекте, особенно в таких его элементах, как предвыборная кампания, политические дебаты и т. д. Для уточнения выявляемых проблем исследуются подходы ряда учёных: Т. Ван Дайка, М. Бахтина, Е. Шейгала. Делается вывод, что дискурс, в частности политический, находится на стыке социолингвистических исследований, тем самым объединяя языкознание с другими научными дисциплинами.

**EDWARD AVAGYAN – *Sociolinguistic Analysis of Discourse.*** – In the framework of this article the author tries to analyze discourse from the point of view of sociolinguistics, according to which discourse is studied in the aggregate of linguistic and extra linguistic factors. The article touches upon the problem of interrelating and distinguishing between such terms as “discourse”, “genre” and “text”. The author makes an attempt to study the problem of interrelation of these terms in the framework of the political discourse, in particular in such manifestations of it as the election campaign, political debates, etc. To specify the problems under investigation the approach of such scientists as T. Van Dijk, M. Bakhtin and E. Sheygal were studied. It is concluded that discourse, in particular political, is on the joint point of sociolinguistic investigations and thus it unifies linguistics with other scientific disciplines.